Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2022 թ. որոշմամբ
««ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆ 3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1199866
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2007-03-02
1.5 ՀՎՀՀ-ն		02702598
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10511391
		+(374)93632707
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.armroad.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@armroad.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գոռ Ավետիսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	118	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր ,ՀԲ	1,828,245,000
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 2 ԱԶԲ)	50,168,016
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 3 ԱԶԲ)	342,896,800

	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 3 ԵՆԲ),	438,635,700
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 4 ԵԶԲ)	1,200,000
	Վանաձոր-Բագրատաշեն - Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի անվտանգության բարելավման ծրագրի համակարգում և կառավարում (Մ6-ԱԶԲ)	963,232,074
	Վանաձոր-Ալավերդի -Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի անվտանգության բարելավման ծրագիր (Մ6-ԵՆԲ)	27,000,000
	ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր	80,316,800
	Ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր	64,088,900
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	228,680,710
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	1,481,598,000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր ,ՀԲ	2,606,883,782	
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 2 ԱԶԲ)	27,512,580	
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 3 ԱԶԲ)	416,261,624	

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 3 ԵՆԲ)	464,923,505
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 4 ԵԶԲ)	1,215,090
Վանաձոր-Բագրատաշեն - Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի անվտանգության բարելավման ծրագրի համակարգում և կառավարում (Մ6-ԱԶԲ)	1,020,532,858
Վանաձոր-Ալավերդի -Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի անվտանգության բարելավման ծրագիր (Մ6-ԵՆԲ)	22,457,758
ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր	90,034,336
Ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր	106,658,147
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	4,756,479,680
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	4,756,479,680

Նշումներ՝

Ն

Digitally signed by SAFARYAN MARINA 7904810158
Date: 2022.08.25 14:05:16 AMT

Գիտակցելով անուղղակի հարկադրանքի հնարավոր հետևանքները՝ ____26____թերթից՝
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ք. Երևան **30.06.2022թ.**

Խորհրդի անդամներ՝

Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, նախագահ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), քարտուղար
Ա. Ավանեսյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ
Ա. Ղուլարյան	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ, խորհրդի անդամ
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար, խորհրդի անդամ
Գ. Շախբազյան	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, խորհրդի անդամ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է հեռակա կարգով՝ օրակարգային հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից գրավոր քվեարկության /հարցման/ միջոցով:

Խորհրդի նիստն իրավազոր է, քանի որ քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկել է Խորհրդի 10 անդամներից 6-ը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, խորհրդի նախագահ Գ. Սանոսյանի կողմից հրավիրվել է Խորհրդի նիստ հետևյալ օրակարգային հարցերով /այսուհետ՝ Օրակարգ/.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 1 արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով ընդունված որոշման կատարման վերաբերյալ:
2. Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա տարեկան ֆինանսական, գործունեության հաշվետվությունների և անկախ աուդիտորական եզրակացության հաստատում:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետի՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ անցկացված հեռակա կարգով քվեարկության արդյունքում կայացրեց հետևյալ որոշումները.

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 1 արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով ընդունված որոշման կատարում:

Քվեարկության արդյունքում 6 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Ընդունել ի գիտություն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Ավետիսյանի զեկույցը՝ Խորհրդի 07.02.2022 թվականի թիվ 1 արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով ընդունված որոշման վերաբերյալ:

2. Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատում:

Քվեարկության արդյունքում 6 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա տարեկան ֆինանսական, գործունեության հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունը:

Խորհրդի նախագահ՝ Գ. Սանոսյան

Խորհրդի քարտուղար, անդամ՝ Ք. Ղալեչյան

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբկայք՝ www.pkfauditservice.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հոգաբարձուների խորհրդին

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է **«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ** (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ Հիմնադրամի ֆինանսկան հաշվետվությունների մնացորդները աուդիտորական ուսումնասիրության չեն ենթարկվել, հետևավաբար մենք կարծիք չենք կարող հայտնել ֆինանսական հաշվետվությունների սկզբնական մնացորդների ճշտության վերաբերյալ, քանի որ մենք հնարավորություն չենք ունեցել այլընտրանքային ընթացակարգերի միջոցով ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ և համոզվել այդ մնացորդների ճշտության վերաբերյալ:

Համաձայն Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի՝ Հիմնադրամը պարտավոր էր վարել հաշվապահական հաշվառում՝ ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն Հիմնադրամը հաշվապահական հաշվառումը վարել է ոչ լիարժեք, այն է՝ հաշվապահական հաշվառումը չի վարել համապատասխան համակարգչյանի ծրագրով, չի վարել կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա և չի պահպանել անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների գրանցման և վարման կարգը:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված

ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԵ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմանդրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

- Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 19.06.2022թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն
Որակավորված աուդիտոր՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր՝ Գայանե Թովմասյան

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

'000 դրամ	Ծնթ.	31/12/21	14/10/21 Աուդիտ չանցած
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		23,225	24,186
Ոչ նյութական ակտիվներ		3,385	2,507
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	3	**26,611**	**26,693**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		10,031	2,992
Դեբիտորական պարտքեր		16,312	35,597
Ստացվելիք ֆոնդեր	4	185,011,636	188,807,419
Տրված կանխավճարներ	5	23,776,453	25,877,967
Տրված փոխառություններ		12,724	12,686
Դրամական միջոցներ	6	1,481,598	2,222,460
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**210,308,754**	**216,959,121**
Ընդամենը ակտիվներ		**210,335,365**	**216,985,814**
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ	7		
Կուտակված հավելուրդ(պակասուրդ)		(5,546,500)	(1,747,782)
Ընդամենը զուտ ակտիվներ		**(5,546,500)**	**(1,747,782)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		26,611	26,693
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**26,611**	**26,693**
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	203,499,458	211,495,868
Կրեդիտորական պարտքեր	9	12,355,796	7,211,035
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**215,855,254**	**218,706,903**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**210,335,365**	**216,985,814**

Սույն Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 19.06.2022թ.

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԳՈՌ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ/
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ՄԱՐԻՆԱ ՍԱՖԱՐՅԱՆ

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	Ծնթ.	31/12/21
Ծրագրային ծախսեր		(7,996,410)
Եկամուտ շնորհներից	10	7,996,410
Այլ եկամուտ, զուտ		117,373
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից զուտ		(3,912,272)
Տարվա արդյունք մինչև հարկումը		**(3,794,899)**
Շահութահարկ	11	(3,819)
Տարվա արդյունք		**(3,798,718)**
Այլ համապարփակ եկամուտ		-
Տարվա համապարփակ արդյունք		**(3,798,718)**

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ — ԳՈՌ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ/
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ — ՄԱՐԻՆԱ ՍԱՖԱՐՅԱՆ

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ

Հազար դրամ	**Կուտակված արդյունք**	**Ընդամենը**
Մնացորդն առ 14 հոկտեմբերի 2021թ.		
(աուդիտ չանցած)	**(1,747,782)**	**(1,747,782)**
Տարվա արդյունք	(3,798,718)	(3,798,718)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(5,546,500)**	**(5,546,500)**

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **Գոռ Ավետիսյան**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ/
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ **Մարինա Սաֆարյան**

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	31/12/21
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	
Ստացված/(վերադարձված) ֆոնդեր	
Կենսական ՀԲ	1,828,245
Տրանշ 2 ԱԶԲ	50,168
Տրանշ 3 ԵՆԲ	438,636
Տրանշ 3 ԱԶԲ	342,897
Տրանշ 4 ԵԶԲ	1,200
Մ6-ԱԶԲ	963,232
Մ6-ԵՆԲ	27,000
Բագրատաշենի կամուրջ	80,317
ՃՑԲԾ	64,089
Այլ	228,680
	4,024,464
Ծրագրային ելքեր	
Կենսական ՀԲ	(2,606,884)
Տրանշ 2 ԱԶԲ	(27,512)
Տրանշ 3 ԵՆԲ	(464,924)
Տրանշ 3 ԱԶԲ	(416,262)
Տրանշ 4 ԵԶԲ	(1,215)
Մ6-ԱԶԲ	(1,020,533)
Մ6-ԵՆԲ	(22,458)
Բագրատաշենի կամուրջ	(90,034)
ՃՑԲԾ	(64,089)
Այլ ելքեր	(42,569)
	(4,756,480)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(732,016)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերության ազդեցությունը	(20,741)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(752,757)**
Դրամական միջոցների մնացորդն առ 14 հոկտեմբերի	**2,234,355**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**1,481,598**

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԳՈՌ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ/
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ՄԱՐԻՆԱ ՍԱՖԱՐՅԱՆ

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՀԻՄՆԱԴՐԱՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) իրավահաջորդը: Համաձայն ՀՀ կառավարության 6 օգոստոսի 2021թ. թիվ 1298-Ա որոշման ՊՈԱԿ-ը 14,10,2021թ-ին վերակազմակերպվեց որպես «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ:

Հիմնադրամն իր միակ հիմնադիր ՀՀ Կառավարության թիվ 1298-Ա որոշման համաձայն 14,10,2021թ-ից նոր կանոնադրության հիման վրա շարունակում է ՊՈԱԿ-ի բնականոն գործունեությունը՝ որպես անկախ շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Հիմնադրամի հիմնական նպատակն է՝ իր իրավասության սահմաններում, ՀՀ ճանապարհային ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը, այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու տարածքային կառավարման մարմինների կողմից մշակված՝ տրանսպորտի ոլորտի կապիտալ ու զարգացման ծրագրերի մասով (ՀՀ պետական բյուջեի) և օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերն ու աշխատանքները:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն 3:

2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 118 աշխատակից:

1.2 ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

31.12.2021թ-ին ավարտվող տարում Հիմնադրամն իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր (Կենսական ՀԲ), որը ֆինանսավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև 2013թ-ի փետրվարի 11-ին կնքված թիվ 8229-AM , 2015թ-ի օգոստոսի 26-ին կնքված թիվ 8523-AM և 2019թ-ի հոկտեմբերի 10-ին կնքված թիվ 8957-AM համաձայնագրերի շրջանակներում, և որի նպատակն է ընտրված կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել Հիմնադրամի կարողությունը կենսական նշանակության ճանապարհային ցանցը կառավարելու գործընթացում:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 2 ԱԶԲ), որը ֆինանսավորվում է համաձայն 2011թ-ի մայիսի 30-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման բանկի միջև կնքված թիվ 2729-ARM համաձայնագրի, և որի նպատակն է միջպետական ճանապարհային տրանսպորտի տրանզիտի հեշտացումը, Աշտարակ-Թալին 41,3 կմ երկշարք ճանապարհի վերակառուցումն ու լայնացումը քառաշերտի:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր Տրանշ 3: (Տրանշ 3 ԵՆԲ և Տրանշ 3 ԱԶԲ): Այս ծրագիրը բաղկացած է երկու մասից՝ մի մասը ֆինանսավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև 2013թ-ի նոյեմբերի 18-ին կնքված թիվ 82634-AM ֆինանսական պայմանագրի շրջանակներում (Տրանշ 3 ԵՆԲ), իսկ մյուս մասը՝ համաձայն Հայաստանի հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2014թ-ի մարտի 11-ին կնքված 2993-ARM համաձայնագրի շրջանակներում (Տրանշ 3 ԱԶԲ), որի նպատակն է ՀՀ տարածքում զարգացնել ենթատարածաշրջանային և պետական ճանապարհատրանսպորտային ցանցը, բարելավել ու բարեկարգել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը Հայաստանում՝ Լանջիկ-Գյումրի հատվածում:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 4 ԵԶԲ), որը ֆինանսավորվում է համաձայն 2015թ-ի ապրիլի 14-ին և 2017թ-ի հոկտեմբերի 25-ին (համաձայնագիր 2) Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Զարգացման բանկի միջև կնքված համաձայնագրերի, և որի նպատակն է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Ագարակ քաղաքից դեպի Քաջարան ճանապարհահատվածի (32 ԿՄ) թողունակությունն ու վթարային վիճակի նվազեցումը:

- Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի բարելավման ծրագիր, որը ֆինանսավորվում է 2016թ-ի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման բանկի միջև կնքված թիվ 3449-ARM համաձայնագրի համաձայն (Մ6-ԱԶԲ), Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկիմիջև կնքված համաձայնագրի շրջանակներում (Մ6-ԵՆԲ), և որի նպատակն է բարելավել տրանսպորտի արդյունավետությունն ու անվտանգությունը ՀՀ տարածքում գտնվող Մ6 ավտոմայրուղու Վանաձոր-Բագրատաշեն, Վանաձոր- Ալավերդի-Վրաստան հատվածներում:

- ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր(Բագրատաշենի կամուրջ), որը ֆինանսավորվում է համաձայն 2012թ-ի նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման բանկի միջև կնքված պայմանագրի, և որի նպատակն է Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը՝ ներառյալ վերահսկողության և մոնիտորինգի հարցերում աջակցության ցուցաբերումը:

- Ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր (ՃՑԲԾ), 'ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ, որը ֆինանսավորվում է համաձայն ՀՀ կառավարության 30,12,2020թ-ի թիվ 2215-Ն որոշման 19 փետրվարի 2021թ-ի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Հիմնադրամի միջև կնքված անհատույց դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 11ՃԴ պայմանագրի, և որի նպատակն է իրականացնել ՀՀ-ում ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ:

  Հաշվետու տարում Կենսական ՀԲ, Տրանշ 2 ԱԶԲ, Տրանշ 3 ԵՆԲ, Տրանշ 3 ԱԶԲ, Տրանշ 4 ԵԶԲ և Մ6-ԱԶԲ ծրագրերի հատուկ նպատակի հաշվետվությունները ենթարկվել են անկախ աուդիտորական ուսումնասիրության:

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

2.2 ՆՈՐ և ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
Հողումներ ,հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ
2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ
Ապահովագրության պայմանագրեր (ՖՀՄՍ 17)	1 հունվարի 2023թ.
Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.

2.3 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.4 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.5 ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար:

2.6 ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնադրամի գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Չնայած ենթադրությունները և դատողությունները հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.7 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՈՒՄ

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում: Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալները: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների և պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

2.8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Ստացվելիք ֆոնդեր,
- Դրամական միջոցներ,
- Կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	'000 դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական ակտիվներ	**31.12.2021թ-ի դրությամբ**
Տրված փոխառություններ	12,724
Ստացվելիք ֆոնդեր	185,011,636
Դրամական միջոցներ	1,481,598
Ընդամենը՝	186,505,958

	'000 դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ	**31.12.2021թ-ի դրությամբ**
Կրեդիտորական պարտքեր	12,355,796

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են ստացվելիք ֆոնդերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների, ստացվելիք ֆոնդերի և դրանց համարժեքների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

2.9 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:

Հիմնադրամի բանկային հաշիվները վարվում, իսկ գործարքներն իրականացվում են ԱՄՆ դոլարով (USD), Եվրոյով (EUR) և ՀՀ դրամով (AMD): ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված գործարքները փոխարկվում են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած միջին փոխարժեքով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված USD-ի և EUR-ի միջին փոխարժեքները AMD-ի նկատմամբ հետևյալն են.

	31.12.2021թ. դրությամբ միջին փոխարժեք ՀՀ դրամ	**14.10.2021թ. դրությամբ միջին փոխարժեք ՀՀ դրամ**
1USD	480,14	478.76
1 EUR	542,61	555.89

2.10 ՇՆՈՐՀՆԵՐ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են Հիմնադրամին՝ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ

ա) Հիմնադրամը կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և

բ) դրամաշնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսերը, որոնց համար ստացվել են:

2.11 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Ընթացիկ վերանորոգումները և պահպանման ծախսերը ծախսագրվում են նրանց կատարման պահին: Հիմնական միջոցների բաղկացուցիչների փոխարինման ծախսերը կապիտալացվում են, իսկ փոխարինված բաղկացուցիչները ապաճանաչվում են:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ կիրառելով մաշվածության հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

Մեքենասարքավորումներ՝	8 տարի
Տրանսպորտային միջոցներ՝	8 տարի
Գրասենյակային գույք՝	8 տարի
Համակարգչային տեխնիկա՝	3 տարի

2.12 ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթ կամ վնաս կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում.

Համակարգչային ծրագիր՝	8 տարի
Լիցենզիաներ և վստահագրեր՝	20 տարի:

2.13 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.14 ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

Կանխավճարները հաշվառվում են՝ արժեքից հանելով արժեզրկումից կորուստները: Եթե կա հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվը, ապրանքը կամ ծառայությունը չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում, իսկ դրա համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են ակտիվներ, որոնք ձեռք են բերվել ծրագրերի շրջանակներում օգտագործման համար:

'000 դրամ	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Գրասենյակային գույք և այլև	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 14 հոկտեմբերի 2021թ.	**388**	**14,667**	**4,433**	**4,697**	**2,507**	**26,692**
Ձեռքբերումներ		858			1,304	2,162
Դուրսգրումներ						
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**388**	**15,525**	**4,433**	**4,697**	**3,811**	**28,854**
Կուտակված մաշվածություն						
Առ 14 հոկտեմբերի 2021թ.						
Տարեկան մաշվածության ծախս	43	1,247	332	196	425	2,243
Դուրսգրումներ						
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**43**	**1,247**	**332**	**196**	**425**	**2,245**
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2021թ.	**345**	**14,278**	**4,101**	**4,501**	**3,386**	**26,611**

* 31.12.2021թ. դրությամբ Հիմնադրամի 581,415,0 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ամբողջությամբ մաշված են:

4. ՍՏԱՑՎԵԼԻՔ ՖՈՆԴԵՐ

Իրենցից ներկայացնում են Հիմնադրամի ծրագրերի իրականացման համար ստացվելիք ֆոնդերը.

Ծրագիր	31.12.20212 '000 դրամ
Կենսական ՀԲ	3,367,253
Տրանշ 2 ԱԶԲ	32,634,127
Տրանշ 3 ԵՆԲ	21,807,156
Տրանշ 3 ԱԶԲ	22,018,510

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Տրանշ 4 ԵԶԲ	87,581,747
Մ6-ԱԶԲ	14,145,012
Մ6-ԵՆԲ	2,031,854
Բագրատաշենի կամուրջ	1,425,977
ՃՑԲԾ	-
Ընդամենը	185,011,636

5. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

	31.12.2021 '000 դրամ
Շինարարական աշխատանքների գծով	**23,507,098**
Խորհրդատվական ծառայությունների գծով	**269,355**
Այլ	
Ընդամենը	**23,776,453**

Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

'000 դրամ

Ծրագիր	**Արժույթ**	**Գումար**	**31.12.2021**
Կենսական ՀԲ	ԱՄՆ դոլար	4,572.76	2,196
	Եվրո	259,974.71	141,065
	ՀՀ դրամ		37,947
Տրանշ 2 ԱԶԲ	ՀՀ դրամ		29,201
Տրանշ 3 ԵՆԲ	Եվրո	105,239.94	57,104
	ՀՀ դրամ		96,330
Տրանշ 3 ԱԶԲ	ԱՄՆ դոլար	4,437.16	2,130
	ՀՀ դրամ		396,702
Տրանշ 4 ԵԶԲ	ՀՀ դրամ		15,016
Մ6-ԱԶԲ	Եվրո	32,537.76	17,655
	ՀՀ դրամ		181,298
Մ6-ԵՆԲ	Եվրո	171,205.85	92,898
	ՀՀ դրամ		26,264
Բագրատաշենի կամուրջ	ՀՀ դրամ		6,004
ՃՑԲԾ	ՀՀ դրամ		-
Այլ հաշիվներ	ՀՀ դրամ		379,788
Ընդամենը			**1,481,598**

Հաշիվները պահվում են ՀՀ գանձապետարանում և ՀՀ վստահելի բանկերում:

7. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ

Հիմնադրամի զուտ ակտիվները ենթակա չեն բաժանման վերջինիս հիմնադիրների միջև՝ ոչ սովորական գործունեության, ոչ էլ դրա լուծարման դեպքում: Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների ամբողջ շահույթ/վնասը:

8. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հիմնադրամի կողմից ծրագրերի իրականացման համար ստացված դրամաշնորհների շարժը հետևյալն է՝

	31.12.2021թ. '000 դրամ
Սկզբնական մնացորդ	211,495,868
Ստացված /(վերադարձված) դրամաշնորհներ	
Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ	(7,996,410)
Վերջնական մնացորդ	203,499,458

9. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	31.12.2021թ. '000 դրամ
Շինարարական աշխատանքների գծով՝ որից	12,180,433
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով	175,363
Ընդամենը	12,355,796

Պահումները կատարվում են ծառայությունների դիմաց դուրս գրված հաշիվների մինչև 10% չափով(տոկոսադրույքը սահմանված է պայմանագրով)՝ մինչև մեկ տարի ժամկետով, որպես աշխատանքի որակի երաշխիք:

Կրեդիտորական պարտքի մնացորդի մեջ ներառված հետավարտական երաշխիքային վճարը կազմում է 11,507,640,0 հազ.ՀՀ դրամ:

10. ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ

	31.12.2021թ. '000 դրամ
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ	7,994,167
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	2,243
	7,996,410

11. ՀԱՐԿԵՐ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել: Կիրառելի հարկերը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենքների համաձայն:

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 2021թ-ի համար սահմանված է 18% (2020թ.՝ 18%):

12. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ

Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Հիմնադրմի-ի դեմ առկա են ստորև հայցերը՝

N	Գործի համարը, կողմերը և ներկայացված պահանջը	Գործի ընդհանուր նկարագիրը	Գործի քննության ընթացքը
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3			
1	Քաղաքացիական գործ N ԾԴ3/0010/02/17 ըստ հայցի Հայաստանի Հանրապետության, ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընդդեմ Արթուր Աղաջանյանի, «Հենզել Նազար» ՍՊԸ -ի՝ հողամասի օտարման պահանջով և Արթուր Աղաջանյանի, Մարինե Վանուշի Աղաջանյանի և «Հենզել Նազար» ՍՊԸ-ի հակընդեմ հացը ընդդեմ ՀՀ, ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի՝ ՀՀ Շիրակի մարզ, Հոռոմ համայնք, 1-ին փողոց, 1/1 հասցեում գտնվող ամբողջ անշարժ գույքի ու դրա վրա ամրակցված շարժական գույքերի նախնական շուկայական արժեքի փոխհատուցմամբ օտարման պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին Սկզբնական հայցով փոխհատուցման գումարը՝ 6.211.751 ՀՀ դրամ Հակընդեմ հայցով հայցագինը կհստակեցվի Հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող ապրանքագիտական փորձաքննության արդյունքներով:	Սկզբնական հայցով ՀՀ-ն, ի դեմս Հիմնադրամի դիմել է դատարան Ծրագիր 3-ի շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքում գտնվող 112-001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասի օտարման պահանջով: Օտարվող սեփականության սեփականատերը վիճարկում է հայցապահանջը՝ առարկելով հողամասի օտարման դիմաց տրամադրվող փոխհատուցման դեմ: Հակընդդեմ հայցով հայցվորները պահանջում են օտարել հողամասի մնացած մասը ևս, ինչպես նաև վիճարկում են Ծրագրի շրջանակներում գնահատված հողամասի, դրա վրա առկա շինությունների փոխհատուցման արժեքը, փոխհատուցում են պահանջում հողամասին ամրացված հաղորդակցուղիների դիմաց:	Հայցը բավարարվել է: Սեփականատիրոջ կողմից վճիռը բողոքարկվել է, բողոքը բավարարվել է, գործն ուղարկվել է նոր քննության: Արտադատարանական կարգով համաձայնություն է ձեռք բերվել, որպեսզի Հիմնադրամը պատվիրի հողամասի , դրա վրա առկա շենք, շինությունների ապրանքագիտական փորձաքննություն, որի արդյունքներով կներկայացնի վերջնական դիրքորոշում՝ փոխհատուցման հետ կապված սեփականատերերի առարկությունների վերաբերյալ: Ներկայում Հիմնադրամը միջոցներ է ձեռնարկում փորձագիտական ծառայություններ պատվիրելու ուղղությամբ: Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2			
2	Քաղաքացիական գործ N ԵԿԴ/0337/02/15 ըստ հայցի Արամայիս Մուրադյանի ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի՝ վնասի հատուցման պահանջի մասին Հայցագին՝ 3.469.900 ՀՀ դրամ	Հայցվորը պնդում է, որ Ծրագիր 2-ի շրջանակներում ոռոգման խողովակների տեղափոխման հետևանքով ջրագծերը քանդվել են, ուստի վերջինս չի կարողացել ջրել իր ծառերը, որոնք գտնվել են իրեն պատկանող Ագարակ համայնքի 201-012 ծածկագրով հողամասի վրա, որը ներկայում Հայաստանի Հանրապետությանը սեփականությունն է՝ օտարվել է Ծրագրի շրջանակներում:	Հայցվորի պահանջը բավարարվել է: Վճիռը բողոքարկվել է: Բողոքը բավարարվել է և գործն ուղարկվել է նոր քննության: Գործի նոր քննությանը դատաքննության նախապատրաստման փուլում է
3	Քաղաքացիական գործ N ԵԴ/18331/02/19 ըստ հայցի «Խոյանք» ՍՊԸ ընդդեմ Հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ընկերության իրավունքը խախտող ՊՈԱԿ-ի 05.04.2019թ. գրավոր ծանուցումն անվավեր ճանաչելու և հայցվորից անհիմն գանձված գումարը բռնագանձելու պահանջով և Հիմնադրամի հակընդդեմ հայցը ընդդեմ «Խոյանք» ՍՊԸ-ի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության, գումարի բռնագանձման պահանջով Սկզբնական հայցով հայցագին՝ 300.000 ՀՀ դրամ Հակընդդեմ հայցով հայցագին՝ 423.000 ՀՀ դրամ	Հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 05.04.2019թ. թիվ 351 գրությամբ ներկայացված ծանուցումը, որով միակողմանի լուծվել է կողմերի միջև 07.06.2018թ. կնքված Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի վրա տեղակայված հաղորդակցուղիների տեղափոխման նախագծերի փոփոխությունների իրականացման աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՏԾԻԿ-ԱՇՁԲ-2018/1ՆԱ պայմանագիրը և որպես հետևանք պարտավորեցնել վերացնելու www.procurement.am ինտերնետային կայքի «պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում պայմանագրի լուման մասին գրառումը և հօգուտ Ընկերությանը բռնագանձել 300.000 ՀՀ դրամ, որպես ընկերությունից անհիմն գանձված տույժի գումար: Հակընդդեմ հայցով Հիմնադրամը պահանջում է Ընկերությունից բռնագանձել Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում վճարման ենթակա տույժ, տուգանքի գումարը:	Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Մ-6, Վանաձոր- Ալավերդի- Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր			
4	Քաղաքացիական գործ N ԵԴ/5312/02/18 ըստ հայցի Ալվարդի Անանյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ՝ հողամասի չօտարվող մասը ձեռք բերելուն պարտավորեցնելու պահանջի մասին Հայցագինը կհստակեցվի փորձաքննության արդյունքներով :	Ծրագրի շրջանակներում մասնակի օտարվող ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքում գտնվող 06-088-0216-0003 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերը դիմել է դատարան՝ պահանջելով օտարել հողամասի չօտարվող հատվածը ևս:	Գործով հայցվորը պահանջել էր փորձաքննություն: Փորձաքննության արդյունքում փորձագետը եզրակացրել էր, որ հողամասի մնացած հատվածի մի մասը ևս ենթակա է օտարման: Փորձագետի եզրակացության վերաբերյալ ներկայացվել են առարկություններ և ներկայացվել է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն: Միջնորդության վերաբերյալ դատարանի որոշումը դեռ չի ստացվել: Միջնորդությունը չբավարարելու դեպքում Հիմնադրամը կներկայացնի, այլ հարցադրումներով փորձաքննություն կատարելու նոր միջնորդություն:
5	Քաղաքացիական գործ N ԵԴ/9966/02/18 ըստ հայցի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ, «Տեր-Հայրապետյան ՇԻՆ» ՍՊԸ, «Հիդրոէնշին» ՍՊԸ՝ պատճառված վնասը համապարտության կարգով փոխհատուցման պահանջի մասին Հայցագին՝ 16.410.240 ՀՀ դրամ	Հայցվորը պնդում է, որ Ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում շահագործվող էքսկավատորի շերեփի ատամների հարվածի հետևանքով վնասվել է տվյալ հատվածում գտնվող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ–ին վարձակալության իրավունքով հանձնված «Նովոսելցովո» ջրատարը, որի հետևանքով վերջինիս պահանջում է վնասի հատուցում:	Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:
6	Քաղաքացիական գործ N ԵԴ/12301/02/19 ըստ հայցի Արթուր Մովսիսյանի, ընդդեմ Հայաստանի Հանրապետության և Հիմնադրամի՝ պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին Հայցագին՝ 1.265.000 ՀՀ դրամ	Հայցվորը պնդում է, որ Ծրագրի շրջանակներում վերակառուցվող ճանապարհի փակման, հաղորդակցուղիների տեղափոխման հետևանքով վերջինիս բիզները վնաս է կրել, ուստի պահանջում է վնասի հատուցում	Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:
7	Քաղաքացիական գործ N ԵԴ/3325/02/20 ըստ հայցի Սամվել Կիրակոսյանի ընդդեմ Հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն ՝ գումար բռնագանձելու պահանջի մասին Հայցագին 2.290.777 ՀՀ դրամ	Հայցվորը պնդում է, որ հանդիսանում է Ծրագրի շրջանակներում ՀՀ-ին օտարված ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքում գտնվող 06-112-0508-0014 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր և օգտագործող, ուստի պահանջում է հոգուտ իրեն բռնագանձել Հողամասի և հողամասի վրա առկա բարելավումների գումարը:	Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:
8	Քաղաքացիական գործ N ԼԴ/3240/02/18 ըստ հայցի Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հիմնադրամի	Սկզբնական հայցով ՀՀ-ն, ի դեմս Հիմնադրամի դիմել է դատարան պահանջելով ՀՀ -ին օտարել Վահագնաձոր	Գործի վարույթը կասեցված է՝ դատաապրանքագիտական և դատաբուսաբանական համալիր

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

	ընդդեմ Էմիլ Ալբերտի Ղազարյանի՝ սեփականության օտարման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Էմիլ Ալբերտի Ղազարյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հիմնադրամի փոխհատուցման չափը փոփոխելու և հողամասի նախնական տեսքը վերականգնելու կամ պատճառված վնասը հատուցելու պահանջների մասին Սկզբնական հայցով փոխհատուցում 3,358,662 ՀՀ դրամ Հակընդդեմ հայցով հայցապահանջ 17.062.550 ՀՀ դրամ (հայցագինը կարող է փոփոխվել փորձաքննության արդյունքով)	համայնքում գտնվող 06-102-0040-0007 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը: Սեփականատերը փոխհատուցման չափի դեմ առարկել է: Հողամասի սեփականատերը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պահանջելով վերականգնել իր հողամասի նախքին տեսքը, որը առկա է եղել մինչև Ծրագրի շրջանակներում ճանապարհաշինարարական աշխատանքների կատարումը, ներառյալ վերականգնել թվով 45 հատ եղևնու, 12 հատ հացենու, 13 հատ բոխու ծառերը, իսկ դրա անհնարինության դեպքում պարտավորեցնել փոխհատուցել հողամասի ապօրինաբար օգտագործմամբ պատճառված վնասը՝ հատված ծառերի քանակը հաշվարկելով 45 հատ եղևնու, 12 հատ հացենու, 13 հատ բոխու ծառ:	փորձաքննություն նշանակման հիմքով:
9	Քաղաքացիական գործ N ԱՐԱԴ1/0107/02/20 ըստ հայցի Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հիմնադրամի ընդդեմ Էմիլ Ալբերտի Ղազարյանի՝ սեփականության օտարման պահանջի մասին: Սկզբնական հայցով փոխհատուցում 4. 217.241 ՀՀ դրամ՝ որից 5537.35քմ հողամասի համար՝ 1521941, պտղատու ծառերի համար՝ 2287000 դրամ, Գյուղատնտեսական եկամտի 10%-ի և ավելի կորստի համար՝ 408300 դրամ: Պատասխանողը դատարանում բողոքարկել է փոխհատուցման գումարի չափը:	Սկզբնական հայցով ՀՀ-ն, ի դեմս Հիմնադրամի դիմել է դատարան պահանջելով ՀՀ -ին օտարել Աղձք համայնքում գտնվող 02-008-0132-0626 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 5537.35 քմ: Սեփականատերը փոխհատուցման չափի դեմ առարկել է դատարանում:	Գործի վարույթը կասեցված է՝ դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակման հիմքով: Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը. 1. Հաշվի առնելով Շահեն Խաչատրյանին Արագածոտնի մարզի Աղձք բնակավայրի վարչական տարածքում գտնվող 02-008-0132-0626 ծածկագրով 13099.29 քմ (ամբողջ հողամասի չափն է) հողամասի գտնվելու վայրը, դիրքը, տվյալ տարածքում անշարժ գույքի գնագոյացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, որքան կկազմի նրա շուկայական արժեքը 03.05.2021թ. դրությամբ: 2. Որքան կկազմի վերը նշված հողամասից հասարակության և պետության կարիքների համար օտարվող 5537,35 քմ շուկայական արժեքը, հաշվի առնելով հողամասի այդ հատվածի դիրքը, ինչպես նաև տվյալ տարածքում անշարժ գույքի գնագոյացման վրա ազդող հանգամանքների առկայությունը: 3. Հողամասի իրացվող հատվածի իրացման դեպքում հողամասի մնացած՝ չիրացվող մասը արժեզրկվում է թե՝ ոչ : 4. Որքան կկազմի իրացվող մասում առկա պտղատու այգու շուկայական գինը, հաշվի

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

			առնելով պտղատու ծառերի տարիքը և բերքատվության պայմանները:
ՀՀ պետական բյուջեի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառում			
10	Քաղաքացիական գործ N ԵԿԴ/4881/02/17 ըստ «Իջևանի ՃՃՇ» ՓԲԸ սնանկության գործով կառավարչի ընդդեմ Հիմնադրամի, «Հայաստանի Հանրապետության Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին Հայցագին՝ 169.361.791 ՀՀ դրամ	«Իջևանի ՃՃՇ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչը դիմելով դատարան՝ պնդում է, որ Հ-37, Մ-4- Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար-Այգեպար ճանապարհի Վազաշեն-Պառավաքար հատվածի շրջանցիկ ճանապարհի սխալ նախագծա-նախահաշվային փաստաթղերի պատճառով վերջինիս կրել է վնասներ, կատարել է լրացուցիչ աշխատանք (պայթեցումներ), պահանջում է բռնագանձել վնասի գումարը	Գործը դատաքննության նախապատրաստման փուլում է:

13. ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունեն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:

6-20 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.08.2022 14:04